**ՀԱՎԵԼՎԱԾ 3**

# ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

(ըստ Աստվածաշնչի)

Աստվածն իր ժողովրդին մատնացույց արեց Նոյին, որպես՝ հովվի և առաջնորդի: Հայաստանի պատմության քերթողահայր Մ. Խորենացին մեջբերում է «բազմաթիվ ճշմարտություններ գերազանցող» խոսքերը. *«Մինչև աշտարակի կառուցումը, ասում է նա, և մինչև մարդկային ցեղի միալեզու խմբի բաժանումը բազմաթիվ լեզուների, և նավարկությունը Հայաստան, երկրի տիրակալներն էին Զրվանը, Տիտանը և Հապետոսթը: Ինձ թվում է, որ նրանք՝ Սեմը, Քամը և Հայրապետն են»: «Ամբողջ տիեզերքում իրենց իշխանությունը կիսելուց հետո, ասում է նա, Զրվանը զորեղանում է և հասնում տիրապետության եղբայրների վրա:*

*Տիտանը և Հապետոսթը չենթարկվեցին Զրվանի տիրած իշխանությանը և պատերազմի դուրս եկան նրա դեմ, «քանի որ նա մտադրություն ուներ իր բոլորի վրա /աշխարհի վրա/ ունեցած թագավորական իշխանությունը՝ փոխանցել որդիներին»...* Արդյունքում Տիտանը տիրեց Զրվանի ժառանգական կալվածքների որոշ մասին:

Մ. Խորենացին նշում է, որ սրանում մեծ ճշմարտություն կա, և համոզչության համար մեջբերում է կիպրական /քաղաքի/ եպիսկոպոս Կոնստանցի Եպիֆանի խոսքերը: Վերջինս, Իսրայելի որդիների կողմից յոթ ժողովուրդների կործանման առիթով ասել է, որ. *«Աստված ճշմարտացիորեն կործանեց այդ ժողովուրդներին Իսրայելի որդիների առաջ, որովհետև երկիրը, բաղկացած էր Սեմի որդիների կալվածքներից, որը /նկզբանե/ նրանք ստացել են, որպես՝ հասաբաժին, իսկ Քամը ներխուժեց և բռնությամբ տիրեց դրան: Սակայն Աստվածը, իրավուքը և երդման պայմանները պահպանելով, Քամի ցեղին հատուցեց վրեժխնդրությամբ՝ Սեմի որդիներին վերադարձնելով ժառանգությունը»:*

Հարկավոր է նշել, որ հետագայում Բելը (Քամի սերնդից), նույնպես փորձում է իր իշխանությունը տարածել ամբողջ աշխարհի վրա: Սակայն մեր Հայկը /Հայրապետի սերնդից/ ապստամբում և սպանում է Բելին:

Եկեք խորհրդածենք, ինչու Հայկը, չցանկանալով ենթարկվել Բելին, Բաբելոնում որդու ծնունդից հետո, ուղևորվում է Արարատյան երկիր: Հայկը վերադարձավ իր հայրերի երկիրը, որպեսզի այն պաշտպանի Բելից:

Մ. Խորենացին հիշատակում է՝ մարդկանց ոչ մեծ քանակի մասին. ովքեր բնակվել են այնտեղ նախկինում, և վերջիններս «կամավոր ենթարկվել են» հերոսին: Հին փիլիսոփաների խոսքերից՝ նա նշում է, որ Սեմի կրտսեր որդիներից մեկը՝ Տարբան անունով, իր երեսուն որդիների և տասնհինգ դուստրերի ու նրանց ամուսինների հետ, հորից առանձնանալով, բնակություն է հաստատում գետերից մեկի ափին, և Սեմը նրա անունով է կոչում այդ երկրամասը՝ Տարբան (կամ Տարոն): Տարոնը՝ Տուրուբերան նահանգի երկրամաս է, որը գտնվում է Վան լճից արևմուտք, Մել /Մեղրագետ/ գետի հովտում:

Հրեաները առաջին և երկրորդ վերաբնակեցման ժամանակ /ըստ Մ. Խորենացու՝ Հայոց Պատմության/ բնակվել են հատկապես այն տարածքներում, որտեղ մի ժամանակ ապրել են իրենց նախահայրերը, մասնավորապես Վանա լճի մոտերքում, Սասնա լեռների կողքին: Հայրապետի սերունդները կողք կողքի համերաշխ ապրել են, իրենց միջավայրում ընդունելով Տարբանի՝Սեմի կրտսեր որդիներից մեկի սերունդներին:

Այսպիսով, առաջին անգամ «ավետյաց» երկիր են վերադառնում «Հայկի երեխաները» հերոսի հետ միասին: Հայկը՝ իրեն յուրահատուկ արժանապատվությամբ, իր հզոր տոհմի

անդամ՝ Բելի դեղաթույներով ծածկված դիակը, հրամայում է ձեռքերի վրա տանել Հայրք և թաղել բարձրունքում, ի տես իր որդիների ու կանանց: Չի բացառվում, որ Մեսրաիմը՝ Բելի հայրը և Թորգոմի /Հայրապետի ծոռը/ հոր-հորեղբայրը, նույնպես ծնվել կամ ապրել է Հայրքում /հայերեն՝ նշանակում է հայրի երկիր, երկիր, որը հիմնել է հայրը/:

Քննարկենք այն ժամանակաշրջանը, երբ Ասորեստանում իշխանության է գալիս / Նինվեի գահին է բարձրանում/ Նինը: Նա «հոգու խորքում գաղել էր իր նախնի՝ Բելի թշնամանքի հուշը/, այդ մասին տեղեկանալով ավանդությունից, երկար տարիներ մտորել էր՝ փառապանծ Հայկի սերունդներին վրեժխնդիր լինելու մասին: Նրանցից մեկը՝ Արան սպանվում է՝ ասորական թագուհի Շամիրամի / Նինի կինը/ հետ պատերազմում: Շամիրամը առաջարկում է Արային ամուսնանալ իր հետ, և թագավորել այն ամենի վրա, ինչին տիրում էր Նինը: Սակայն Արան չի համաձայնվում... Այսինքն՝ Հայրապետի սերունդը վեհանձնաբար հրաժարվում է ժառանգության այն իրավունքից, որը պատկանում էր Քամի սերունդներին: Սա՝ եզական փաստ է, հնագույն պատմության մեջ, երբ մեկն ինքնակամ հրաժարվել է իշխանությունից և հարստությունից, այն ամենի վրա թագավորելուց, որին տիրել է Նինը՝ /Ասորեստանի թագավորը/, Քամի սերնդից:

## ТЫ БЫЛ ТАКИМ

**П. Севак, Ереван (1950г.),**
**перевод автора**

Каждый камень здесь несет
Следы твоей крови и созидающей руки.
Чистые воды подобны твоей совести.
Тебя звали смелым, звали и слабым, немощным,
Но не... властителем и повелителем.
Иногда ты был бит, и сам бил зло,
Тебя иногда пленяли и дарили другим.
Ты бывал и непобедимым, и мужественным,
Был иногда и жесток, иногда мягким и добрым,
Но не... бесчестным и бесправным.
Таким тебя знает даже твой враг,
В одной руке меч, в другой серп,
Или искусное перо, или скребло,
Ты то законопослушный, то талантливый,
Всегда талантливый...

Ք. Ա. III հազարամյակում Պաղեստինի տարածքում նստակյաց կյանքի անցան քանաանների ցեղերը: Ք. Ա. 18 դարում Պաղեստինը նվաճվել է հիկսոսների կողմից, ովքեր հայտնի էին, որպես՝ «հովվական թագավորներ» կամ «օտարերկրյա իշխաններ» (հիկսոս, Hiksos — սա սասունցի հայկն է (haik), այսինքն՝ Սասունից): Պաղեստինում՝ նրանց քաղաքների և ավանների համար բնութագրական են կավե մեծ պատնեշները պատերից դուրս, Մեռյալ ծովից հյուսիս: Եգիպտոսից հրեաների դուրս գալը տեղի է ունեցել Ք. Ա. 1290-1223 թ.թ. ընթացքում: Հայկը Բաբելոնից վերադառնում է Արարատյան երկիր Ք. Ա. մոտավորապես 2026թ.:

Արամը բազմաթիվ անձնվեր սխրանքներ է գործում և Ք. Ա. 1827-1769թ.թ. ընդարձակում է երկրի սահմանները: Հիկսոսները նվաճում են Եգիպտոսը և իշխում են այնտեղ Ք. Ա. 1750-1580թ.թ. իրենց մայրաքաղաք Ավարիսում, Նեղոսի ճյուղաբերանում: Նրանք ծանոթացնում են եգիպտացիներին ձիու, կառքի, ուղղահայաց մանածագործական հաստոցի, ճաղերով անվի, ձիթենու, նռան և ուրիշ. հետ: *«Հիկսոսները խափանեցին Եգիպտոսի մեկուսացումը, որը հիմք հանդիսացավ Նոր թագավորության մշակույթի ծաղկման համար, սակայն արդյունքում՝ առաջ բերեց նրանց արտաքսմանը»* (Ու. Բրեյ, Դ. Տրամպ): Նրանք

պարզեցրեցին եգիպտական դպրությունը, ստեղծեցին հստակ այբբենական գիր (Ի. Ա. Լապսիս, Ս. Այվազյան): Հիկսոսները, ամենայն հավանականությամբ Եգիպտոսի նոր մայրաքաղաք Ավարիսը անվանափոխեցին՝ ի պատիվ հին հայկական քաղաք-բնակատեղ Արմավիրով, կառուցված Արամայիսի կողմից (ծնվել է Ք. Ա. 1980թ.), Արամանեակի որդին, Հայկի սերունդների ցեղապիրակալներից, ցեղապետերից: Արմավիր (Արամի վայր՝ Արամի տեղ) կառուցվել է բլրի վրա, Երասխի /Արաքսի/ ափերին:

Բայց ինչու՞ հիկսոսները նվաճեցին Եգիպտոսը: Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Մ. Խորենացու մոտ, նա գրում է, որ Քամի սերունդը՝ *«Մեսրրաիմը սա Մեծրաիմ է, որը նշանակում է Եգիպտոս, և շատերը պարեգիրներ, Նեբրոտին, այսինքն՝ Բելին համարում են հաբեշ, սևամորթ, հավաստացրել են մեզ, որ սա ճիշտ է, հաշվի առնելով նրա /իր երկրի/ բնակության սահմանակցությունը՝ Եգիպտոսին»*: Մեծրաինը (Մեծրաին) Աստվածաշնչում Քամի սերունդն է, նա մարմնավորում է Եգիպտոսը: Պատմիչը նշում է, որ «Կրոնոսի և Բելի անունների կրողը՝ դա Նեբրոտն է»... Բելը, համաձայն Աստվածային Գրության, իսկապես հանդիսանում է Նեբրոտը, Մեսրաիմյի որդին: Մ. Խորենացին մեզ տալիս է Հայաստանի պատմության բանալիային պահեր, համարյա եզովպոսյան լեզվով:

Բազմաթիվ մասնագետներ համարում են, որ հրեական /իսրաելական/ ցեղերը առաջին անգամ հիշատակվել են Եգիպտոսում, հիկսոսների կառավարման ժամանակաշրջանում: Սա լիովին բացատրելի է և տրամաբանական: Հրեական ցեղերը եղել են դաշնակից հիկսոսների հետ: Սեմի և Հայրապետի սերունդները փորձել են միատեղ ետ վերադարձնել Քամի սերունդների կողմից նվաճած հողերը:

Սակայն Քամի սերունդները, կրկին վերադարձնում են իրենց ձեռքը՝ աշխարհին տիրելու իշխանությունը: Եգիպտոսը պայքարի է ելնում հիկսոսների դեմ և նրանց դուրս է քշում երկրից, հետագայում նվաճելով Սիրիան և Պաղեստինը, ընդարձակելով սահմանները ընդհուպ մինչև Եփրատի ափերը (մասնագետները, Եգիպտոսից հրեական ցեղերի հեռանալը վերագրում են այս ժամանակահատվածին): Հիկսոսների մնացորդները նահանջեցին Պաղեստին, որից հետո նրանց ճակատագրի մասին այլևս ոչ մի տեղեկություն չկա (տես՝ ՄՍՀ հ. 6, 517 էջ):

Ք. Ա. XIV դարի վերջերից մինչև XIII դարի կեսերը Եգիպտոսը պայքար է տանում խեթ-հնդեվրոպացիների դեմ Սիրիային տիրելու նպատակով: Պաղեստինը և հարավային Սիրիան ամրապնդվում են Եգիպտոսի կողմից:

Ք. Ա. 1000-525 թ.թ. ընթացքում սկսվում է Եգիպտոսի հզորության աստիճանական վախճանը: Ք. Ա. X դարի վերջին, Սողոմոնի մահից հետո, եգիպտացիներին ևս մեկ անգամ հաջողվեց թալանել Երուսաղեմը, սակայն արդեն Ք. Ա. VIII դարում նրանց սեփական հողերն են նվաճում ասորիները: 660 թվականին Եգիպտոսը ազատագրվում է ասորական լծից, սակայն, երբ Նոր բաբելոնյան թագավորությունը հարձակվեց Ասորեստանի վրա, եգիպտական Նեհո փարավոնը փորձում է օգնել նրան: Վերջինս պարտության է մատնում հրեական թագավորին, Պաղեստինով անցնելու ճանապարհին: Սակայն Նեհոն պարտություն է կրում Նաբոգոդոնոսորի կողմից: Նեհոի հաջորդները փորձեցին օգնել հրեաներին՝ Բաբելոնի հետ պայքարում, սակայն հաջողություն չունեցան:

Ք. Ա. 525 թվին Եգիպտոսը ընկնում է Պարսկաստանի «ձեռքը»: Ք. Ա. 332 թվին Եգիպտոսը նվաճվել է Ա. Մակեդոնացու կողմից: Եվ այլն և այլն: Բայց եկեք վերադառնանք հիկսոսներին: Արդյոք իսկապե՞ս հիկսոսները պատկանում են հայկական էթնոսին: Ս. Այվազյանը առաջին անգամ արտահայտեց այն տեսակետը, որ հիկսոսները՝ հայ լեռնեցիներ են: Սակայն բազմաթիվ մասնագետներ և գիտնականներ ափսոս չկարողացան գիտականորեն ոչ հերքել, ոչ էլ համաձայնվել նրա հետ: Հիկսոսների ծագման խնդիրը հուզել և հուզում է գիտական աշխարհին: Իրականում, ովքե՞ր են հիկսոսները: Այս հարցին համոզիչ պատասխան մենք գտնում ենք հայկական ժողովրդական էպոսում: Այո, հիկսոսները՝ լեռնեցի հայեր են, հատկապես, սասունցի հայկեր /սասունցի հայեր/: «Սասունցի Դավիթ» էպոսից մի հետաքրքիր հատվածի օրինակ բերենք:

Արդեն չափահաս դարձած Դավիթը վռնդում է Մսրա-Մելիքի սուրհանդակներին՝ հարկահավաքներին, ովքեր ցանկանում էին տանել դրամահարկը /յոթ տարվա/: Ի պատասխան դրան, Մսրա-Մելիքը զորքով գալիս է քաղաք Սասուն, պահանջում է հարկը տալ, եթե՝ ոչ, ապա կկործանի ողջ քաղաքը:

Դավիթը պատասխանում է. «Հորս գանձերը չե՛մ տա, թող Մսրա-Մելիքը ինչ ուզում է անի»: Այստեղ հայտնաբերվում է կապը՝ Հայկի և Բելի պատմության հետ, որտեղ Հայկը ապստամբում է Բելի դեմ, պաշտպան կանգնելով հայրական հողերին:

Դավիթը սկզբում վերցնում է նետը և աղեղը /նույնպես ինչպես և Հայկը/, հետո հայրական Թուր-Կեծակին, գլխարկը, անխոցելի կապանը և գոտին, նստում է հայրական ձին և դուրս գալիս թշնամու դեմ մարտի.

*«Այդ պահին Դավիթը Աստծո անունը տվեց՝*
*Ո~վ Մարութա Աստվածածին»:*

Մարութա աստբածամայրը այստեղ հանդես է գալիս, ինչպես կույս Մարիամի նախակերպարը, աստվածածինը և Հիսուս Քրիստոսի երկրային մայրը /տես՝ Խաչապաշտություն գլուխը/: Մարութա վանքը կառուցել է Դավթի հայրը՝ Միհրը՝ մեր Հայրը:

Մարիամ անվան ստուգաբանությունը /սուրբ աստվածաշնչյան աստվածածինը/. ոչ պարզորեն, համարում են, որ այն, հնարավոր է, նշանակում է «ուժեղ, գեղեցիկ»: Հայերեն Մարիամ = Մ/այր/ արա, այսինքն՝ աստված, արև /աստվածամայր/: Եթե կարդանք Արամ անունը հետադարձ, կստացվի՝ Մարա. Մարմար, իսկ Մարմարյա ծով՝ մարմարա: Մարտ (mart) ամիսը՝ գարնան սկիզբն է (ծնունդ) և կրկին օգտագործվում է մար արմատը:

*Դավիթը միայն մի անգամ զարկեց...»*

«Սասունցի Դավիթ» էպոսը արտացոլում է հիկսոսների պայքարի հատկանիշները, այսինքն՝ հայ լեռնեցիների /սասունցիների/ պայքարը եգիպտացիների հետ (Սանասարի և Բաղդասարի պայքարը, Միհրի /Դավթի հայր/, Փոքր Միհրի /Դավթի որդի/ պայքարը թշնամիների դեմ և այլն): Հայոց էպոսը՝ եզական վկայություն է. Սասնա երկրի հին հայերի հերոսությունների: Հիկսոսների և Սասնա երկրից նրանց առաջնորդների կյանքի հատվածները՝ Եգիպտոսի նվաճումը և իրենց ենթարկումը, պահպանվել են և իրենց արտացոլումն են գտել էպոսում:

Հին հրեաները, մասնակից լինելով հիկսոսների արշավանքներին, նույնպես իրենց ժողովրդական բանահյուսության մեջ՝ հուշեր են պահպանել մեր Դավթի հերոսությունների մասին: Մասնավորապես, աստվածաշնչյան Դավթի մասին լեգենդներում ու առասպելներում: Եվ նույնիսկ Իսրայելա-Հրեական պետության իրենց լեգենդար թագավորին կնքել են Դավիթ անունով:

Էպոսից՝ նյութի համեմատական վերլուծությունը՝ կրոնական տեսանկյունից, թույլ է տալիս դատողություն անել այն մասին, որ «Սասունցի Դավիթ»-ում հիմնավորումներ են պահպանվել ոչ այնքան հեթանոսական հավատի, որքան՝ հնագույն մինչև հեթանոսությունը: Չի բացառվում, որ էպոսում քննարկված կրոնական հատկանիշները վերաբերվում են աստվածաշնչյան, նախասկզբնական ժամանակաշրջանին, երբ երկրի վրա ապրում էր մեկ ժողովուրդ, որ խոսում էր մեկ լեզվով, և հավատում էր մեկ աստվածի:

## Եզրակացության փոխարեն

1. Մարդկության պատմության մեջ առաջին անգամ բոլորի վրա իշխելու փիրապետությանն է հասնում Քամը /Նոյի որդիներից/:

2. Աշխարհում առաջին անգամ պատերազմ սկսվեց, երբ Սեմը փորձեց բոլորի վրա ունեցած թագավորական իշխանությունը ժառանգել իր որդիներին: Երկու եղբայրները՝ Քամը և Հայրապետը ապստամբում են Սեմի դեմ:

3. Առաջին անգամ ազատագրական պատերազմներ է վարել հայերի նախնին՝ Հայկը (Հայրապետի սերնդից) Բելի (Քամի սերնդից) դեմ: Հայկը հանդես եկավ բոլորի դեմ, ովքեր ձգտում էին բոլոր հերոսների վրա միանձնյա իշխանություն ունենալ: Հայկը (ինչպես նաև հայերի մոտ՝ Օրիոն համաստեղությունը) -ազատության և անկախության խորհրդանիշն է, համբառնել է երկինք և համարվել է երկնային լուսատու (Պատերազմա-խաչ՝ քաջության նշան):

4. Առաջին անգամ Հայքը վերադարձավ «ավետյաց» երկիր, իրագործելով իր ցեղակիցների վերադարձը՝ Բաբելոնից դեպի Արարատյան հայրական հողը: Հին հրեաները /Սեմի սերունդը/ հետևեցին այս օրինակին, դուրս մղելով քանանացիներին (Քամի սերունները) Պաղեստինից: Հրեաների երկու «գերյալները» հայոց թագավոր Տիգրանի օրոք, երբ վերաբնակիչները տեղավորվեցին Արմավիրում և Վաղարշապատում, և ավելի ուշ, երբ հրեաները տեղաբաշխվեցին Շամիրամ քաղաքում՝ /այսինքն՝Վանում/, պատմական հիշողությամբ հիմնավորված Սեմի երկու որդիների՝ սերունդների վերադարձը «ավետյաց» տարածքները: Այդ որդիները առանձնացան Սեմից և նստակյաց կյանքի անցան Արարատյան երկրում, դրանից հետո, ինչպես նրանց հայրը սկսեց հետախուզել հողը, ուղևորվելով դեպի հյուսիս-արևմուտք:

5. Առաջին անգամ՝ միանձնյա աշխարհին տիրելու իրավունքից վեհանձնորեն հրաժարվում է հայոց թագավոր Արա Գեղեցիկը /Հայկի սերնդից/, կամավոր մերժում է թագավորական գահը, որը իրեն առաջարկել էր գեղեցկուհի Շամիրամը՝ Ասորեստանի տիրուհին: Այդ գահը պատկանում էր Քամի սերնդից՝ Նինուին /Շամիրամի ամուսնուն/:

6. Հրեական մարգարե Երեմիան Բաբելոնի դեմ պատերազմելու կոչ է անում. «Կանչեցե՛ք, Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան զորքին»- արտահայտելով արտակարգ կարևոր միտք: Պատմական իսկական պատճառը տվյալ ժամանակաշրջան էր, երբ Հայրապետի և Սեմի սերունդները համատեղ հանդես եկան զավթիչների դեմ /Քամի սերունդների/ և հաղթեցին վերջիններիս: Հետագայում պատմությունը կրկնվեց: Պատմությունը այժմ էլ կրկնվում է:

7. Հայկական ժողովրդական էպոս «Սասունցի Դավիթը» իր մեջ ընդգրկում է հերոսական հատկանիշներ՝ հիկսոսների, սասունցի հայկերի անցյալից, ովքեր նպաստեցին մշակույթի ծաղկմանը Նոր Արքայությունում: Կգա ժամանակը, երբ Արամի սերունդները ապծո կամոք կվերադառնան Տոհարմի երկիրը, հայրենի Հայրքը, արժանի հարգանքի տուրքը կհատուցեն իրենց հայրերի հիշատակին, ըստ պաղգամի, հանուն հավատքի, ժառանգության իրավունքի, ճշմարտության և արդարության: Ոչ մի դեպքում չի կարելի մոռանալ Փոքր Մհերի մարգարեությունը:

Նախորդ Հաջորդ

Բովանդակություն

Քաղաքակրթության քարե փարեգրությունը

© ArcaLer
Էլեկտրոնային տարբերակ – 2010